

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԵՐԳԱՐԱՆ

Բ. ՊՐԱԿ



1935

Տպարան ՍՍՀՍԿ-ՄԵՍՐՈՊ Գահիրե

27467



*Համերկ հրատարակչի մատչելիության համար*

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԵՐԳԱՐԱՆ

Բ. ՊՐԱԿ



1935



Տպարան ՍՍՀՍԿ-ՄԵՍՐՈՊ Գահիրե









### ՎՐԷԺԻ Ի ՀԱՆԱՐՀԱՆ

Բա՛մ, փորոտան բարձուսա բոմբիւնք յԱյրարատեան  
դաշտն ի վայր.

Արի արանց արիւնք յեռանդն առատոնան ի հրազայր.

Հրաւէր հայրենեաց հրուչակի նդհանուր,  
Ոգիք Հայկազանց բորբոքին ի հուր,  
Որք երկնաւորին պսակին էք կարօտ,  
Որք երկրաւորիս փաւսոց երկնայորդ.

Հապօ՛ն, արի արանց մանկունք  
Հայրենավրեժբրդ Հայկազունք,  
Հապօ՛ն, ի զեկն, գունդագունդ  
Յեռեալ ի պար թունդ ի թունդ.  
Ի՛ գե՛ն ի վրե՛ժ, օն անդր յառաջ,  
Ի՛ գե՛ն ի վրե՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,

Օ՛ն անդր յառաջ,  
Մի՛ ձախ մի՛ յաջ,  
Օ՛ն անդր յառաջ,  
Յառա՛ջ, յառա՛ջ,  
Հապօ՛ն, յառաջ:

Հայկեան փանդաւանց որտաւնդոսա դաւընչին բարբառք  
մարտագոտ.

Դառնակոռոչ անդրաձայնէ պարսիկ կերկեր ի շեփոր.  
Շարժեն հրեշտակք թեւս յուսափողփողս,  
Ճիւղալք ճուճալոց կայտունն ի դժոխս.  
Շաինդըն շանթառաք զեթերօք փարի,  
Սարաափեն սանդարք ի խօլ խաւարի

Հա՛պօ՛ն արի արանց մանկունք, ևն.:

### ԱՌԱՅՈՏ ԿԱՆՈՒԽ

Առաւօա կանուխ Հայի երեխայք  
Դըպրոց են վազում զուարթ ու տրազ,  
Հըլու ուշադիր սորվում են համար  
Պատրաստում անթիւ գանձ ողգի համար.  
Բըթումիս տըղայ հայ շա՛տ տեսած կաս  
Ի՞նչ է մեզ պակաս:

Տես, տես գլորում է բըլուր անագին,  
Դա է բեռնակիր պանդուխտ Մըշեցին.  
Արիւն քըրտինքով, հայկական գըթով  
Տուն տեղ պահում է հայի ամօթով:  
Անպիտան մշակ հայ շա՛տ տեսած կաս.  
Ի՞նչ է մեզ պակաս:

Բերդըն անառիկ կայ սարի վըրայ,  
Անթիւ թնդանոթք են նորա պաշտպան.  
Հայ քաջ զօրականք նըրա մօտեցան,  
Անառիկ պարիսպք գեաին գլորեցան.  
Լօրիս այլաղբեաց մէջ շա՛տ տեսած կաս,  
Ի՞նչ է մեզ պակաս:

Ամայի դաշտ է, դարերէ է վեր  
Նորա մէջ կային վայրագ գազաններ,  
Հէնց որ հայերի ոտքն այդ տեղն հասաւ,  
Ամայի վայրը Աստծու դարախ դարձաւ.  
Շնորհագուրկ հայեր դու շա՛տ տեսած կաս.  
Ի՞նչ է մեզ պակաս:



Դտրերէ ի վեր Հայն է հարածուած ,  
 Ինչո՞ւ, էնտո՞ր որ շատ է աչքաբաց .  
 Լուսոյ լուսոյով գուճար ժողովեց  
 Անթիւ դպրոցներ ամէն տեղ հիմնեց .  
 Հայի պէս խելօք դու շա՞տ տեսած կաս .  
 Ի՞նչ է մեզ պակաս :

Չէ՛, հայը չունի լւր մէջ մեծ թերի,  
 Ամէն գործի մէջ հըմուտ է արի ,  
 Հայե՛ր, չի լինել անտեղի գովեստ  
 Թէ ձեզ անուանեմ խելօք, ժիր, համեստ,  
 Միայն կը մնայ ձեզ իրար սիրել  
 Ու աշխարհ ատել :  
 ԳԱՄԱՌ. ՔԱԹՒՊԱ.

**ՈՆՅ ԵՆ ՀԱՐՈՒՄ ԽՆՈՅԻՆ**

Թոկը ծառից կապեցին,  
 Հաս խրնոցին կախեցին  
 Թրլիսկ չըլիսկ, չըլիսկ թըլիսկ .  
 Երկու ծայրից բըռնեցին,  
 Տարան բերին շարժեցին  
 Թրլիսկ չըլիսկ, չըլիսկ թըլիսկ...  
 Ահա այսպէս հարեցին,  
 Դեղին կարագ հանեցին:  
 Ա, ԱՐԱՐԱՅԵԱՆ

**ՈՐՆ Է ՀԱՅԱՍՏԱՆ**

Ո՞րն է աշխարհ Հայաստան .  
 Միթէ ոտ է ճաճկաստան,  
 Որ իւր փառքերէն կամովին զրկուած,  
 Կանանոցի մէջ կենդանի թաղուած .  
 Չէ, չէ, սխալ է,  
 Մեր աշխարհն այլ է :

Ո՞րն է աշխարհ Հայաստան .  
 Միթէ սա է Պարսկաստան,  
 Որի պատկերն է Բաբելոն խմոր,  
 Ընտանի կեանքն է Սողոմ եւ Գոմոր .  
 Չէ, չէ, սխալ է,  
 Մեր աշխարհն այլ է :

Ո՞րն է աշխարհ Հայաստան,  
 Ահա սա է Հայաստան,  
 Որ իւր քաջութեամբ առլւծի նման,  
 Փշրեց բռնութեան դարաւոր շղթան .  
 Հա՛, հա՛, շիտակ է .  
 Մեր աշխարհն այս է :



## ՅԱԻԵՐԺԱՅԻՐ

Ձարթի՛ր, սիրտ իմ վշտահար,  
 Նոր առաւօտ քեզ ծագեաց,  
 — Պարք մուսայից շուրջ դքեւ  
 Պահեն զգահոյսդ յարհաւրաց:  
 Պանծա՛ գիւցազուն, մեծ արքայ, փառօք  
 Ճեմն առեալ յերթս քո՝ երգով,  
 Ոչ արեւ, ոչ լուսին, ոչ աստղեր, ոչ երկինք,  
 Հասանեն քոյդ փառաց, յաւերժացի՛ր:

Ուրախութեան օր է այս  
 Բերկրին սրտեր գեռահաս,  
 — Պարք մուսայից, ևն.:

## ԼՈՒՄՆԱԿԸ

Լուսնակն երու լեռան գըլխին  
 Դաշան ու հովիտ լուսացաւ,  
 Զով հովիկը լուսնի շողին,  
 Լեռան կըրքից վայր եջաւ:

Դէս դէն թըռաւ, շուրջը նայեց  
 Յանկարծ կանգնեց քարացաւ.  
 Իւր թեւերը մէկ էլ ուղղեց,  
 Դէպ ի դաշտը սըլացաւ:

## ՄԱՅԻՍ

Մենք արժանացանք ուրախ մայիսին,  
 Ծառեր ծաղիկներ սղջ կանաչեցին,  
 Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը  
 Ուրախ ու զուարթ յառաջ վազեցին:

Տերեւչատ ծառի ըստուերների տակ  
 Թռչուններն իրանց երգերն են երգում,  
 Կանաչ դաշտերի փափուկ մարգերում  
 Պէտպէս կենդանիք ուրախ արածում:

## ԹՊՉՆԻԿ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Թըռնչիկն ահա դէպ ինձ գարով  
 Ոտքիս վերայ նըստում է.  
 Կըայում բըռնած մի նամակիկ  
 Հօրիցս սղջոյն բերում է:

Սիրուն թռնչիկ, գնա՛ անցիր,  
 Բարեւիկս տար և համբոյր  
 Ես չեմ կարող քեզ ընկերել,  
 Դեռ դասերս չեմ վերջացրել:



## ԿՈՏ ՈՒ ԿԷՍ

Կոտ ու կէս կորեկ ունեմ  
 ցանելու համար.  
 Ճընճղուկներ թըռան եկան  
 ուտելու համար.  
 Կըռացայ քար վեր առայ  
 դարկելու համար.  
 Այ, ճընճղուկիկ,  
 Կարմիր տոտիկ,  
 Սպիտակ փարիկ,  
 Ուտեն կուտիկ,  
 Խըմեն ջըրիկ,  
 Աուի եղրիկ,  
 Պըտտիկ մըտտիկ.  
 Փախչեն երթան  
 ման գարու համար:  
 Ղատապներ դանակ բերին  
 մորթելու համար.  
 Աղջիկներ թեւ քաշեցին  
 փետրելու համար.  
 Պառաւներ պղինձ դրին  
 եփելու համար.  
 Այ ճընճղուկիկ են. :  
 Գուռ-գրկից շուրջ բազմեցին  
 ուտելու համար.

Տէրտէրներ խաչով եկան  
 օրհնելու համար.  
 Աշուղներ սաղով եկան  
 դովելու համար.  
 Այ, ճընճղուկիկ են. :

## ԱՐԵՒԻ ՊԷՍ

Արեւի պէս ճիթ անենք  
 Թըռչունի պէս ճիչ հանենք  
 Ծաղկի նըման շողշողանք  
 Լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ,  
 Թիթեռի պէս թըրթըռանք,  
 Լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ:

Երթանք սարը վաղէ վաղ  
 Քամին կու գայ նաղէ նաղ  
 Շուշան քաղենք, Շուշան ջան, լօ, լօ...  
 Աուուն կու գայ քըչքըչան, լօ, լօ...

Սարից իջնենք ջըրի բով,  
 Վարդի թըփեր բովէ քով,  
 Թուփերի տակ պահ մըտնենք, լօ, լօ...  
 Շուքերի տակ պար բըռնենք, լօ, լօ...



## ԿԱՐԴԱԼ ԵՒ ԳՐԵԼ

Երբ որ լեզուս բացուեցաւ,  
Ազատ խօսիլ սորվեցայ,  
Բարի մօրըս ձեռքի տակ  
Կարդալ գըրել ըսկըսայ:

Չանցաւ երկար ժամանակ,  
Կարողացայ ճանաչել  
Մի քանի արպած առուեր,  
Նըրանցով կարդալ գըրել:

Շատ ժամանակ չ'անցկացաւ,  
Ինձ համար զիրք կարդալը  
Այնպէս դժուար չէր թըլում,  
Ինչպէս կ'առեն ծոյլերը:

Այնուհետեւ ինձ համար  
Հօլ, վեդի, գնդակի չափ  
Սիրելի էր ինձ համար  
Թուղթ, զրիչ, մատիտ, տետրակ:

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Արեւն իր ոյժը կորցրած  
Ամպերի տակ ծածկուեցաւ:  
Սաստիկ քամին ողջ ծառերի  
Տերեւները վայր ամաւ:

Շատ թըռչուններ և թիթեռներ  
Անյայտացան դաշտերից:  
Շատը չունի կանաչ տերեւ,  
Նա զըրկվում է իւր դարդերից:

Իրինքում ամպի քուլէքն,  
Անձրեւն էր են պատրաստում:  
Անասուը իւր տերեւներով  
Առուն ախուր քըչքըչում:

Ինչի՞ դաշտերի սողուններ  
Եւ վայրենի թըռչուններ  
Ըշտապում են իրենց համար  
Մի սպանով անդ գըրանել:

## ԿԱՄՔՈՎ ՈՒ ՍՐՏՈՎ

Կամքով ու սրտով, դիւցազն անձնուրաց,  
Աղգին կրթութեան իր կեանք նըւիրած,  
Ապարէզ կ'իջնայ խոնդով անըման:  
Ընդդէմ խաւարի, հետամուտ ուսման:  
Նետեր կը տեղան օղգասէր կըրծքին,  
Ահեղ ալիքներ մըռընչեն ուժգին,  
Յուսալից տոկայ մարտիկն անվեհեր  
Նոր նոր քայլերով սիրտն է հրդեհեր:  
Կեցցէ կեցցէ միշտ, Հայր մեր Մըխիթար,  
Հայերուս պարծանք և փառք դարէ դար:



Ռանկիրան խոհեմ քալէ սնխուով,  
 Ձի գիտեր երկիւզ: ունի ուժ կարով,  
 Մէն մի մտղ պատմէ յաղթանակ մը նոր,  
 Կանգնէ գիտութեան տաճար լուսաւոր:  
 Եւ արեւմուտքէն արեւելք հեռուն  
 Սըփոէ լիառատ շողեր վառվառն,  
 Խաւարած ազգիս նոր կեանք, նոր գարուն  
 Կը ծաղկի նըման մեսրոպեան դարուն:  
 Կեցցէ կեցցէ միշտ, Հայր մեր Մըխիթար,  
 Հայերսւս պարծանք և փառք դարէ դար:

Հ. Հ. ՈՍԿԵՈՆ

## ՆԱԳԱՍՏԱԿ

Մի՛ վազեր այդչոփ արագ,  
 Իմ սիրունիկ նապաստակ,  
 Շատ պըտտիկ ևս տակաւին,  
 Թաթիկներըդ կը յոգնին:

Կոց քեզ համար հոց բերեմ,  
 Շաքարեղէն ուտեցնեմ,  
 Մինչ մեծանաս զօրանաս  
 Ցտակելով մօտս խազաս:

Ծանըր ծանըր կը քայլես,  
 Սիրտըս վեր վեր կը հանես,  
 Կ'արձակեմ քեզ սպա ես,  
 Կ'երթաս ազաս կ'արածես:

## ՊԱՌԱՅԻ ՀՈՐԹԸ

Ձիւն էր գալիս փաթիլ փաթիլ,  
 Հեան էլ անձրեւ կաթիլ կաթիլ,  
 Այս միջոցին մի պառաւ կին  
 Հորթ էր փընտուում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,  
 Կուրծք ու ծծեր կաթով լիքը:  
 «Հորթը ո՞ւր է», նա բառաջեց,  
 Խեղճ պառաւին լացացըրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով  
 Ողբում էին լաց ու կոծով,  
 Յանկարծ լըտուեց մի բարակ ձայն,  
 Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառաջելով,  
 Պառաւն յեանից տընքաընքալով:  
 Կորած հորթը մօրը զըտաւ,  
 Լիք ծծերը բերանն առաւ:

Ծըծեց բոլոր կաթն ու աըկուեց,  
 Տանտիկնոջը բան չըթողեց:  
 Բայց պառաւը այս անգամին  
 Սիրով ներեց չար հորթուկին:



ԱՂԱՅՊԱՆԸ

Ճամբորդելն է աղացպանին  
Ճամբորդելն, ճամբորդելն,  
Միշտ ամէնէն շատ սիրելին,  
Ճամբորդելն, ճամբորդելն:

Ջրերէն նա է դաս առած,  
Ջրերէն, ջրերէն,  
Վազել երթալ արագընթաց  
Ջրերէն, ջրերէն:

Անիւէն է նա լաւ սորվեր  
Անիւէն, անիւէն,  
Դառնալ, շրջիլ, ժիր անվահեր  
Անիւէն, անիւէն,

Քարերէն է իր օրինակ  
Քարերէն, քարերէն,  
Ծանրը թէեւ, շարժին արագ  
Քարերէն, քարերէն:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՉՄԵՌ

Աշնան վերջին քամին եկաւ  
Սրբեց դաշտեր, ձոր ու լեռ.  
Եւ ամէնքին համբաւ բերաւ  
Թէ գալիս է ցուրտ ձրմեռ:

Ու մըռայլեց երկինք, դետին,  
Մէզը պատեց դաշտ ու սար.  
Ցուրաը եկաւ աիրեց երկրին,  
Ճերմակ հագաւ մեր աշխարհ:

Մարդ, անասուն, ծերուկ հիւրից  
Վախվախելով մըտան տուն.  
Գեան էլ լըռեց ցրտի ահից,  
Ախ, հեռուն է դեռ դարուն:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ


ՄՀՈՒ ՈՂԲԸ

Թող չ'երգէ պըլպուլ Մըշու դաշտերում,  
Թող երգ չը հընչէ Սասնոյ լեռներում,  
Թող ժըպիտ չըգայ Հայերուս դէմքին,  
Թող թախիծ աիրէ Հայերուս սըրտին:

Հայի ձեռքերը արիւնով ներկուած,  
Հայոց սրտեր վշտով է պատած,  
Ալ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան  
Հայոց եղեմի դաշտում անեման:

Քանի՛ հայ աղջիկ չէ զարգարելու,  
Ծաղկով իր կուրծքը շքեղ պճներու  
Թող երգ չը հնչէ Մըշոյ դաշտերում,  
Թող պըլպուլ չ'երգէ Սասնոյ լեռներում:

27467





## ԱՂՔԱՏ ԿԻՆԸ

Յուրաք փրչեց, ձըմեռ սաստիկ,  
Չիւնը ծածկեց զետինը.

Ամենայն մարդ մըտաւ իր տուն  
Պատըպարուել ցըրտիցը:

Ժամի դըռնում դողդողալով  
Կանգնած է մի աղքատ կին,  
Նորա հանգերձ պատառ պատառ  
Չունի շապիկ իր հագին:

Անհամարձակ նա իր ձեռքը

Պարզում է անց կացողին.

«Ողորմութիւն արէք, պարոն,

Անտուն, անտէր աղքատին»:

Չեզ, սիրելիք, ասեմ ւով էր,

Այս խղճալի աղքատը.

Այն ցրտում տանաբոսիկ

Կանգնած էր ժամի դըռնում:

Շատ ժամանակ զեռ չէ անցել,

Երբ նա փառքով ու պատուով

Ման էր գալիս փողոցներում

Իր սեփական կառքերով:

Այժմ վախով նա իր ձեռքը

Պարզում է անց կացողին.

«Ողորմութիւն արէք, պարոն,

Անտուն, սնտէր աղքատին»:

## ԵՐԱՉ

Ես լսեցի մի անոյշ ձայն

Իմ ծերացած մօր մօտ էր,

Փայլեց նշոյլ ուրախութեան.

Բայց ափսոս ուր երազ էր:

Կարկաչահոս աղբիւրն այնտեղ

Թաւալում էր մարգարիտ,

Նա յստակ էր, որպէս բիւրեղ.

Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին ախուր մայրենի

Յիչեց մանկութեան օրեր,

Մօրս համբոյրն ես զգացի

Ա՛խ, ափսոս ուր երազ էր:

Կըրծքին սեղմեց կարօտագին,


Աչքեր սըրբեց — շատ թաց էր.

Բայց արտասուք զընում էին...

Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:



## ԱՐԴԱՐ ԶԱՅՐՈՅԹ



Հերիք, որդեակ, այսքան տարուան տառապանք,  
 Հերիք, դաժան անգութ քիւրտին ոսն ինկանք,  
 Քանի խոնարհ գըլուխ ար ինք գայլերին,  
 Ա՛յնքան ծանրը բեռներ դըրին մեր վըղին:

Հերիք, ելլենք ցոյց ամեք թէ մենք հարազատ  
 Հայ քաջերի արիւնիցն ենք ու ազատ.  
 Թէեւ չունինք ոչ թուր, ոչ սուր, ոչ նիզակ,  
 Մեր բահերն էլ կ'անեն նըրանց շան սատակ:

Ինչո՞վ են նըրանք մեզ սիրելու արժանի.  
 Նըրանք մարդ չեն այլ գազաններ վայրենի,  
 Մերն է ձիւքը, մերն է ուսում և հանճար,  
 Մերն է հողը, մենք ենք նորա տէրն արդար:


— Հերիք, ելլենք, են.

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,  
 Նըրանք մեր վրայ լըռիկ արցունք են թափում.  
 Չեն խնայել թե ու թիկունք, կը հասնին,  
 Շուտով կը գան, կը միանան սուրբ գործին:

— Հերիք, ելլենք, են.

ՄՆՆԿԵՆՆ

## ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ



Ագնիւ ընկեր, մեռանում եմ,  
 Բայց հանգիստ եմ ես հոգւով,  
 Իմ թշնամիք ես օրհնում եմ,  
 Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անգին ընկեր,  
 Չը դնահատուած ոչ ոքից.  
 Բայց հաւաստեաւ անձնանըւէր,  
 Ազգին մըշակ կը հաշուեմ:

Ագնիւ ընկեր, չը մոռանաս,  
 Անդաւաճան ջերմ սիրով  
 Ես սիրել եմ իմ հայրենիք  
 Գնա և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը հայոց ազգի  
 Կարեկցաբար մտածիր,  
 Ոսկէ գըրքոյկն Եղիշէի  
 Քաջ առաջնորդ քեզ ընտիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան  
 Ազատ կամքով ու խըղճով,  
 Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,  
 Իր խընկելի քաջերով:

Ս. ՇԱՀԱԶԻԶ



## Վ Ա Ր Գ Ը

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,  
Տեսաւ մի վարդ դաշտի միջին.  
Վարդը տեսաւ ուրախացաւ  
Մօտիկ վազեց սիրուն վարդին:  
Սիրուն վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր արդան պոկեց,  
Պոկեց այն վարդ դաշտի միջին.  
Փուշը նըրա ձեռքը ծակեց  
Բայց էլ չօգնեց քրնքուշ վարդին:  
Քրնքուշ վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:  
ՅՈՎ, Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

## Ա Ր Օ Ր

Արօ՛ր, արօ՛ր, խիզախ արօր,  
Հերկէ խորշէ մըտքերն յար օր.  
Խփիիդ մատաղ դաշտ ու ծործոր,  
Վարէ հորդէ աղօսներ նոր,  
Քրանաթո՛ր արօր:

Ճակտիս վրայ փորուեցան նոր  
Չես տեսներ, ա՛խ, անդո՛ւթ արօր,  
Հազար ու մէկ աղօսներ խոր.  
Որ կը պատմեն ցաւերս բոլոր...  
Սիգաւո՛ր արօր:

Գ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

## Հ Ն Ձ Ա Կ

Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ,  
Հայրենեաց բաղդին մօտուսա ես տեղեակ.  
Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,  
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Նոր գազափարի քո ցանած սերման,  
Աղնիւ պտուղներ հասուննան արագ.  
Կարին և Պոլիս որոտման նման՝  
Անդրանիկ շարժմունք ծնան քեզ, Հնչակ:

Կոչնակդ հնչեցո՛ւր, հնչեցուր արագ,  
Թող Հայք ոտք ելլեն, ծագէ մինչև ծագ.  
Փշրէ՛ ժանտ շղթան, ծագէ նոր արեգ,  
«Ազատ ենք», հնչէ՛, ոսկեղօծ Հնչակ:

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

## Գ Ա Յ Լ Ի Կ Ն Ե Ր Ե Ն Ք

Բարձրացի՛ր,  
Դայլիկներ եմ Հայօրդի,  
Բարձրաձի՛ր,  
Մի՛ս ձեռք ձեռքի սիւս սիւսի,  
Բարձրանա՛նք,  
Յառաջանա՛նք անվեներ,  
Բարձրանա՛նք  
Եւ բարձրանա՛նք դեպի վեր:  
Քրսիկներով ոսկեհաս  
Թող զարդարուի մեր նակաս.  
Օ՛ն, յառաջ յառաջ,  
Անհառաջ յառաջ:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ



### Հ Ր Ա Ժ Ե Հ Տ

Մնացէք բարեաւ (3) իմ ընտանիք,  
 Մնաջիք բարեաւ հայր իմ, մայր իմ և քոյր  
 Եւ եղբայրդ իմ կըրտսեր Պարոյր,  
 Զի ձայն հայրենեաց կոչէ զիս ի մարտ  
 Բերէք զէնքերո՞ւ ու սողաւարտ:

Մնացէք բարեաւ (3), իմ ընտանիք  
 Թէ ոչ ևս տեսնէք դառնալս սղջ մարտէն  
 Կամ մինչ լինիմ ինկած արդէն,  
 Ըսէ՛ք կեանքն անդարձ ի սէր հայրենեաց  
 Յուսով փառաց նա նըւիրեաց:

Ռ. ՊԱԼԵԱՆ

### Ի Բ Ի Ե Ի Ա Ր Ծ Ի Ի

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
 Թընդացնում ես երկինք երկիր տենչավառ.  
 Քաջ անուկըդ պիտի յիշուի դարէ դար  
 Հըսկայ լեւրինք քեզ ապաստան, Անդրանիկ:  
 Հայոց կուսանք զափնէ պսակ թող հիւսնն,  
 Քընքոյշ ձեռամբ քո ճակատը պըստակեն,  
 Անվախ կուրծքըդ զոհարներով զարգարեն,  
 Կեցցես յաւէտ դու անսասան, Անդրանիկ:  
 Հայաստանի սոխակները քեզ համար  
 Թող դայլայլեն զիշեր ցերեկ անդադար:  
 Անյազթ մընսա դու քաջ կըուի սիրահար,  
 Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանիկ:

### Վ Ա Ր Գ Ա Ն Ի Ե Ր Գ Ը



Հիմի է՞լ լըռենք, եղբարք, հիմի է՞լ,  
 Երբ մեր թշնամին իւր սուրն է զըրել,  
 Իւր օրհասական սուրը մեր կըրծքին,  
 Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,  
 Ասացէք եղբարք հայեր, ի՞նչ անենք  
 Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին  
 Դաւով, հրապոյրով տիրեց մեր երկրին,  
 Զընջեց կործանեց Թորգոմայ սուենք,  
 Խըլեց մեղանից թագ և խօսք և զէնք,  
 Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին  
 Խըլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,  
 Մըշակի ձեռքիցն էլ խփը խըլեց,  
 Այդ սուր ու խփից մեր շղթան կըռեց,  
 Վա՛յ մեզ, շղթայո՛ւ կապուած զերի ենք,  
 Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, մարդիկ ի՞նչ կ'ասեն,  
 Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,  
 Զե՞ն ասել, որ հայք արժանի էին,  
 Այս ըտարրկական անարգ վիճակին,  
 Մեր սուրբ քաջ նախնեաց զործերը զիտենք  
 Մենչև ե՞րբ լըռենք:



Թող լըռէ մունջը, անդամալոյծը,  
 Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,  
 Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,  
 Եկ անվախ ելնենք թշնամու առաջ,  
 Գոնէ մեր փառքը մահով յես խըրենք,

Ու այնպէս լըռենք:

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

**ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱՆ**

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր  
 Երկինքը լի աստղերով,  
 Եւ լուսինը մեղմ փայլում էր  
 Կաթնանման իր լուսով:


Նա նայում էր լըռիկ մռջիկ  
 Իբրև մի կոյս գէպի Վան.  
 Նըրա աչքին երեւում էր  
 Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քիւրտեր  
 Բռնած սուր, թուր, հրացան,  
 Կոտորում են, կոզոպտում են,  
 Աւերում են անտէր Վան:

Եւ կարծես թէ վեր երկնքից  
 Խօսում էր այդ լուռ վկան,  
 «Վրայ հասիր հայ ազգասէր,  
 Ձեռքից կ'երթայ Հայաստան»:

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՅ

**ՔԱՅԼԵՐԳ ԶԷՅԹՈՒՆԻ**



Ձէյթունցիներ մեր զբօսանք  
 է պատերազմ և արչաւանք,  
 Սուր, թուր, զընդակ և հըրացան,  
 Մեր խաղալիքն են յուխտեան:

Արև ելաւ, Ձէյթունցիներ,  
 Շուտ ձի հեծնենք զէնք վեր առնենք,  
 գիմենք յառաջ,

Մեզ ըսպա՛ող Հայաստանը  
 Թող չը տեսնէ ըստրըկութիւն:

Մենք քաջ Հայկայ որդիքը ենք  
 Մեր նախնեաց գործքը լաւ զիտենք,  
 Մեզ չի վայելեր ձեռքը քաշած,  
 Ծոցը դըրած, տունը նըստած:

Կեցցէ՛ Ձէյթուն, ապրի՛ Ձէյթուն,  
 Թող չը տեսնէ ըստրըկութիւն.  
 Քանի ունի մեզ պէս որդիք  
 Կեցցէ՛ Ձէյթուն, ապրի՛ Ձէյթուն:



## ՅԱՌԱՋ ԿԱՀԱՏԱԿՔ



Յառա՛ջ, նահատակք, ցեղի անմահներ,  
 Վեց դարու անմոռ վրէժի զըրահներ,  
 Կատարն հայրենի լեռանց հեռագոյն,  
 Երթանք կոթողել դրօշակն եռագոյն.  
 Հսկայ նըւիրման, տորմիղն հըրաթեւ

Կամաւոր բանակ

Յառա՛ջ, յառաջ անսասան, յառաջ անդեղեւ,  
 Դէպի յաղթանակ:

Վատին սև արիւն մեր հողն սուղեց,  
 Տարազիր հայն իւր կեանքը նորոգեց:  
 Երէկ շղթայուած, այսօր ինքնավար,  
 Յարեաւ վեհօրէն դամբանէն խաւար:  
 Հըսկայ նըւիրման, տորմիղն հըրաթեւ  
 Կամաւոր բանակ,

Յառա՛ջ, յառաջ անսասան, յառաջ անդեղեւ  
 Դէպի յաղթանակ:

## ՏԱԼԻՈՐԻԿՅՅԻ ԿՏՐԻՃԸ

Տալուորիկցի կըտրիճ եմ զտրթ,  
 Քաղքըցու պէս չեմ թուլամորթ,  
 Սարի զաւակ, քարի որդի,  
 Հին քաջ Հայոց եմ մընացորդ:

Տալուորիկի զաւակ եմ քաջ,  
 Ձեմ խանարհիր թարքին առաջ  
 Քարուա յերանց ես ազատ լաճ,  
 Ձեմ տեսեր ո՛չ արօր, ոչ մաճ:

Հա՛յ աղբըրտիք. վայ աղբըրտիք,  
 Տալուորիկի զաւակ եմ քաջ.  
 Աղատութեան սիրուն համար  
 Եկէք գէպ ինձ, յառաջ, յառաջ:

## Մ Ա Ր Զ Ի Կ Ը

Մարդիչ մարզանք կ'ատէի ես  
 Մահու շար նախասպէս.  
 Կեանքս սակայն ուժ մը անդին  
 Կը պարտի մարզանքին:

Ու մարզանքը մըկաններուն,  
 Կու տայ ոյժ և աւիւն,  
 Կը ներարկէ արիւն խիզախ,  
 Կը վանէ ախ ու վայր:

Հայաշունչ մարզանքով  
 Փայլ տանք արգ ակնաթով  
 Հ.Մ.Ը.Մ. մեր շարքերուն  
 Ու մնանք միշտ արթուն,  
 Յաղթական մարդիկներ  
 Հայրենիքը թող մնայ գեր ի վեր:



## ՀԱՅՈՒՆ ԴՐՕՂԸ

Մենք ալ, մենք հիմայ ունինք  
Ազատ անկախ մեր հայրենիք,  
Հայաստանը փոքր է հիմայ  
Վաղը սակայն պիտի մեծնայ:

Կարմիր, կապոյտ, նարնջագոյն  
Ի՞նչ ազուտը է դրօշակն Հայուն:


Հիմայ մեզմէ հեռու է ան,  
Մայրաքաղաքն է Երեւան.  
Բայց մեծ նահանգն է Կիլիկիա,  
Որ վաղը պիտի միանայ:

Կարմիր, կապոյտ, նարնջագոյն  
Ի՞նչ ազուտը է դրօշակն Հայուն:

Եւ այն ասան բոլորս ալ մէկ  
Դէպի երկիր պիտի վազենք,  
Բոլորս ալ հայ դրօշակին տակ  
Հայաստանցի պիտի ըլլանք:

Կարմիր, կապոյտ, նարնջագոյն  
Կեցցէ՛, Կեցցէ՛, դրօշակն Հայուն:

## ԳՈՒԹԱՆԵՐԳ



Զի՛ց տու, քաշի՛, ա՛յ եզը,  
Արա՛, հօ՛, հօ՛, ա՛րա հօ.  
Լուծըզ մաշի, ա՛յ եզը, ա՛րա, հօ՛..  
Աստուած պահէ քու տէրը, ա՛րա, հօ՛..  
Մի՛նն էլ տաշի, ա՛յ եզը, ա՛րա, հօ՛..

Մեր գութանը օղած ա,  
Եզանց ուսը նօթած ա,  
Վարէ՛ վարը, ա՛յ գութան,  
Հազիւ խօփը զօղած ա:

Շողքըն ընկաւ ծըմակին,  
Աստուած կը տայ մըշակին  
Սուր գութանը ծիր զընաց  
Տէր-մըշակը քամակին:

Սերմէ՛, սերմէ՛, ա՛յ մըշակ,  
Սուրբ ա, սուրբ ա քու փեշակ,  
Մինը հազար տուր, Աստուած,  
Քեզ ձէն կը տան Տէր-մըշակ:



## ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

Քարիս տակը քարտա է  
 Ջան գիւլիւմ, ջան ջան.  
 Պարնի ձիանց արօտ է  
 Ջան, ծաղիկ, ջան ջան :

Ուղիղ եօթը տարի է, ջան...  
 Քայրը եղբօր կարօտ է, ջան...

Գու նստել ես դօշակին,  
 Ուշքդ ու միտքդ փէշակին,  
 Խըմել ես նըռան գինին  
 Հոտ ունիս մանիշակին :

Արեւը կամար կամար  
 Կապել ես անկէ քամար,  
 Յիսուն օր պաս եմ պահել  
 Իմ եղբօր ճամբի համար :

Սարի խոտը ծիղուէ ծիղ,  
 Եղբայր երթանք միատեղ,  
 Որ հարամին վըրայ տայ  
 Գըլուխս տամ գլխիդ տեղ :

Եղբայրս ծառի տակին,  
 Սաղմոսը կըռան տակին.  
 Սաղման անգիր է արել,  
 Լեզուն բիւբիւլ է դառել :

ՀՀ Գրադատական գրադարան



MAL024544



